ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼՂԻՄ XX ԳՈՒՄԱՐՄԱՆ ՍՈՎԵՏԻ VIII ՆԱՍՏԱՇՐՋԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ-Ի ԿԱԶՄԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՀՈՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ՍՄԿԿ 27-րդ համագումարը հռչակել և հիմնավորել է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, սովետական դեմոկրատիայի հետագա անշեղ զարգացման և ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման խորացման կուսակցության ստրատեգիական կուրսը: Դրանով իսկ դրվեց երկրի պետական և հասարակական կյանքի հեղափոխական վերակառուցման սկիզբը:

Վերակառուցման դարաշրջանի պրոբլեմները անհնարին է լուծել անձի պաշտամունքի և լճացման ժամանակաշրջանի հին մտածողության օգնությամբ: Հեղափոխական վերակառուցումը իրեն համապատասխան հեղափոխական մտածողություն է պահանջում:

Ազգային հարաբերությունների ոլորտում մինչվերակառուցման շրջանի մտածողության արդյունքը հանդիսացավ ազգամիջյան հարաբերությունների իրական վիճակի խեղաթյուրված պատկերացումը, դրանց վարդագույն ներկումը: Ահա ինչու ՍՄԿԿ 27-րդ համագումարում, 19-րդ համամիութենական կոնֆերանսում ամենայն սրությամբ ընդգծվեց, որ մեր նվաճումները չեն կարող պատկերացում ստեղծել ազգային հարաբերությունների անպրոբլեմայնության մասին:

Սովետական մարդկանց շատ սերունդների ջանքերի արդյունքը դարձավ հանրապետությունների եղակի միությունը: Նրա դրոշի վրա ՍՍՀՄ բոլոր ազգերի և ազգությունների աշխատավորության ինտերնացիոնալ միասնությունն է, ազգերի ինքնորոշման իրավունքը, ազգային կուլտուրաների վերածնունդն ու զարգացումը, ճախկինում հետամնաց ազգային ոգիների առաջադիմության արագացումը, ազգամիջյան երկպառակության հաղթահարումը:

Ինչպես արդարացիորեն նշված է ՍՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսի բանաձևում, սովետների բազմազգ պետության ձևավորման նախնական փուլին հատուկ դինամիզմը էապես թուլացավ և խարխլվեց ազգային հաղթականության լենինյան սկզբունքներից նահանջելու, անձի պաշտամունքի շրջանում օրինականության խախտումների, լճացման գաղափարախոսության և հոգեբանության հետևանքով: Ազգային հարցի լուծման գործում ձեռք բերված նվաճումներին բացարձակ բնույթ էր տրվում, պատկերացումներ էին ստեղծվում ազգային հարաբերությունների անպրոբլեմայնության մասին: Բավականաչափ հաշվի չէին առնվում ինչպես առանձին հանրապետությունների և ինքնավար կազմավորումների, այնպես էլ ազգային խմբերի սոցիալ-տնտեսական, կուլտուրական զարգացման պահանջները: Ազգերի ու ազգությունների զարգացման բուն ընթացքով առաջ բաշված ոչ քիչ սուր հարցերը յուրաքանչյուր լուծում չէին ստանում: Դա հասցնում էր հասարակական անբավարարվածության, որը երբեմն կոնֆլիկտային բնույթ էր ստանում:

ՍՄԿԿ-ն խնդիր է դնում ժամանակին ի հայտ բերել և լենինյան ազգային հաղթականության սկզբունքների դիրքերից արդարացիորեն վճռել ազգամիջյան հարաբերությունների ոլորտում ծագող պրոբլեմները: Դա նշանակում է, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, վճռական և անհաշտ պայքար մղել ազգային անարդարության՝ մեր սոցիալիստական համերաշխության ամրապնդման ճանապարհի ամենախոշոր խոչընդոտի դեմ:

Այս ոլորտում հասունացած խնդիրների շարքում հատուկ տեղ է գրավում Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը, որը ծագել է 1921 թվականի հուլիսի 5-ին Ստալինի անմիջական մասնակցությամբ թույլ տրված ազգային անարդարությունից, երբ 94,6 տոկոս հայ ազգի բնիկ բնակչություն ունեցող Ղարաբաղը, առանց հաշվի առնելու ժողովրդի կամքը, մտցվեց Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմի մեջ: Այդ պրոբլեմը սրվել և խորացվել է հետագա տասնամյակների ընթացքում, երբ Ադրբեջանի ղեկավարության կանխամտածված, պլանաչափ գործողությունների հետևանքով հանրապետության հաղթաթերում և շրջաններում փակվում էին հայկական ուսումնական հաստատությունները, մշակույթի օջախները, ավերվում պատմական հուշարձանները, խեղաթյուրվում հայ ժողովրդի պատմությունը: Գոյատևման նպատակով հայերը հարկադրված թողնում էին իրենց նախնիների օջախը և ապաստան փնտրում Սովետական Միության տարբեր ռեգիոններում:

Ազգային փոքրամասնության նկատմամբ նման հաղթականությունը անհամատեղելի է լենինյան ազգային հաղթականության սկզբունքների հետ: Այս աղավաղումները հսկայական վնաս են հասցրել մարզի հայազգի բնակչության հաղթական, բարոյական, սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքին:

Այս ամենը շարունակվում է նաև ներկայումս, չնայած մեր մարզի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Մ. Ս. Գորբաչովի դիմումին և ՍՄԿԿ Կենտկոմի ու ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ընդունած որոշմանը:

Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը լուծել կարելի է միայն Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից դուրս գալու և Հայկական ՍՍՀ-ին միանալու միջոցով:

Ելնելով շարադրվածից, ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սովետը որոշում է.

1. Հաշվի առնելով ստեղծված վիճակը, անհրաժեշտ համարել մեկ անգամ ևս ընդգծել հետևյալը. արտահայտելով Լեռնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնության պետական կամքը և ելնելով մեր միասնական միութենական բազմազգ պետության ազգային պետական կառուցվածքի հիմքում ընկած ազատ ինքնորոշման ազգերի իրավունքի մասին լենինյան սկզբունքը հետևողականորեն իրականացնելու անհրաժեշտությունից, հռչակել Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դուրս գալը:

2. Հաշվի առնելով, որ վերջին ժամանակներս ինքնավար մարզում իրադրությունը ծայրաստիճան սրվել է, իսկ հանրապետական մարմինների գրված դիրքորոշումը է ապակայունացնում իրավիճակը, ուշադրություն դարձնելով այն բանին, որ Ադրբեջանական ՍՍՀ-ի հետ կապերը գործնականում խզված են, ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետը մարզի համար միակ ընդունելին համարում է Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի 1988 թվականի հունիսի 15-ի նստաշրջանի որոշման իրագործումը:

3. Ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետը հույս է հայտնում, որ Լեռնային Ղարաբաղի միացումը Հայկական ՍՍՀ-ին ըմբռնումով կընկալվի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության աշխատավորների և ժողովուրդների կողմից:

4. Հանձնարարել ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի մարզային սովետի գործկոմին սահմանված կարգով միջնորդություն հարուցել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Արցախի Հայկական Ինքնավար Մարզ վերանվանելու մասին:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶՍՈՎԵՏԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Շ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶՍՈՎԵՏԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ռ. Վ. ԽԱՉԻՑԱՆ

12 հուլիսի, 1988 թ.